

Ինքնաստանձվող անջրաթափանց ժապավեններ

BTM Bituself-ը բիտումային հիմքով մոդիֆիկացված էլաստոմերից բազմաֆունկցիոնալ ջրամեկուսիչ ժապավեն է, ինքնաստանձվող է:



Կիրառման ոլորտը

- Փայտ
- Մետաղ
- Ապակի
- Պլաստիկ
- Սվաղ
- Կարող է ստանձվել բետոնե տարբեր մակերևույթներին: BTM ջրամեկուսիչ ժապավենը կարող է օգտագործվել վերանորոգման և մեկուսացման տարբեր աշխատանքների համար:


Մակերևույթի նախապատրաստումը մինչև ջրամեկուսիչ ժապավենի կիրառելը

Ստանձվող մակերևույթը պետք է լինի չոր և մաքուր: Անհրաժեշտ է մակերևույթից մաքրել և հեռացնել բոլոր ավելորդ մասնիկները, յուղերը, ներկը, ժանգը և մակերևույթին մնացած կողմնակի նյութերը: Մետաղական, պլաստիկ և նմանատիպ մակերևույթները պետք է մաքրվեն համապատասխան լուծիչով: Այնպիսի ծակոտկեն, խորդուբորդ, բարձր կլանողունակությամբ մակերևույթները,

ինչպիսիք են բետոնը, սվաղը, փայտատաշեղային սալը (ДСП), պետք է նախապես ծածկել BITUSOL կամ BITUMER նախաներկով (грунтовка), որից հետո պետք է սպասել վերջնական չորացման:

Կիրառման եղանակը

Ջրամեկուսացման համար հեռացնել Bituself ինքնաստանձվող ժապավենի պաշտպանիչ թաղանթը, որից հետո կաչուն կողմով դնել մակերևույթի վրա և սեղմել: Մակերևույթին լիարժեք կաչունություն ապահովելու համար անհրաժեշտ է Bituself ժապավենը ձեռքի ռետինե գրտնակով վերևից լրացուցիչ հարթեցնել:



Փաթեթավորումը

BTM BITUSELF ջրամեկուսիչ ժապավենն արտադրվում է գլանափաթեթային տեսքով 10մ երկարությամբ և 10-15-20-30-60սմ լայնությամբ:

Պահպանման պայմաններն ու ժամկետները

Bituself ջրամեկուսիչ ժապավենը պետք է պահել գործարանային փաթեթավորմամբ, չոր վայրում,

+5°C-+25°C ջերմաստիճանային պայմաններում,
արևի ուղիղ ճառագայթներից հեռու:

BTM ջրամեկուսիչ ժապավենի առավելությունները

- կիրառման մեջ պարզ է,
- ինքնաստանդավոլ է,
- հարմար է բիտումի հետ կոնտակտի համար,
- կայուն է ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ,
- տարբեր մակերևույթների մեծ մասի հետ ունի գերազանց հարակցում՝ ադիեզիա,
- կարող է օգտագործվել ցածր ջերմաստիճանային պայմաններում,
- կախված չէ կլիմայական պայմաններից,
- ներկված ալյումինե փայլաթիթեղի կիրառման դեպքում ապահովում է գույնի ընտրություն,
- տնտեսապես շահավետ է: